


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazaar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւնի ամար քերական. ողջ դճ. 80
Օսար երկիրներ քարեկան ծրագր 25
Թղթասարի ծախքի խմբագրութեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեան նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի քերական:

Ս Փ Ի Ն Ք Ս

Սփիւնքին պէս խորհրդաւոր ու համար,
քուրմերու բերնով իրենց պատգամները ար-
ձակելու վարժուած, Եգիպտոսի ազգային դո-
ժերու վարիչները յոնքերու պաշտօնում և գի-
մադժերու ծամածռում կունենան ամեն ան-
գամ որ ժողովուրդին գանգատները կամ փա-
փազները լրագրի մը էջերուն մէջ արձագանգ
գտնեն: Հրապարակագրութիւնը չեն արհա-
մարհեր բոլորովին, բայց կուզեն որ իրենց
սահմաններուն չի մտնեայ: հրահանգ առնե-
լու համար միայն թերթը ընդունուի առաջ-
նորդարանի կամարներէն ներս և ո՛չ թէ դի-
տողութիւն մը լսել տալու: արձագանգ տայ
«պարտապաշտած» դատուած բաներուն, իսկ
դուրսէն լուսաճներուն խուլ մնայ: Եւ երբ
իրենց այս հնաւանդ սովորութիւնները խախ-
տած կը տեսնեն, ամենէն իմաստուն ընթաց-
քին կը հետեւին: արձանային լուսթեան մը
մէջ թաղուիլ որուն առջեւ միամիտները պիտի
պատկառին ու սրատեսները չփոթին: Զէ՛մի
որ «լուսթիւնը ոսկի է»:

Ուրիշ ամեն հայաբնակ կեդրոններու մէջ,
Պոլսէն սկսելով, Պատրիարք, առաջնորդ, վար-
չութիւն, գաւառական ժողով, թաղական
խորհուրդ, գէթ բարոյական պատասխանա-
տուութեան մը կապով կապուած կը դգան
ինքզինքնին զիրենք ընտրողներուն հետ: Եւ
գիւրժ իր հրատարակուած միջավայրին համար
խմբագրականներով ու աւօրեայ լրերով, և
հեռաւոր շրջանակներու համար՝ թղթակցու-
թիւններով, կենդանի կը պահէ հաղորդակ-
ցութեան հոսանքը: այսինչ որոշումը կը գովէ,
այսինչը կը քննադատէ, հերքում կամ հաս-
տատութիւն կը ստանայ, ուշադրութիւնները
սեւեռել կուտայ կամ թիւրիմացութիւնները
կը բառնայ, համակրանք կամ զայրոյթ կաղ-
դէ, բայց միշտ կը լուի, նկատողութեան
կառնուի: տեսնուած են Պատրիարքներ որոնք
ինքնագիր նամակով կուղղեն լրագրի մը սխալ
մէկ տեղեկութիւնը՝ էական հարցի մը մէջ,
ժողովականներ որոնք անձամբ խմբագրատուն
կերթան խնդիր մը լուսաբանելու, առաջնորդ-
ներ որոնք յաջորդ սուրհանդակին պաշտօնա-
կան նամակով կը բացատրեն իրենց մասին
գրուածը:

Փարաւոններու երկրին ազգ. իշխանու-
թիւնները միայն առանձնաշնորհում մը ստեղծ-

ծած են իրենց համար՝ այս ընդհանուր սո-
վորութենէն չեղելու: Անշնորհաբար ժամանակ-
ներէ ի վեր, այս սուտ խուլ—համարի քաղա-
քականութիւնը կար արդէն Պոլսոյ և ուրիշ
տեղերու այն թերթերուն նկատմամբ որոնք
կը համարձակէին դադարիլ այս տեղի դոժե-
րով: և հիմակ որ Եգիպտոս իր յատուկ
թերթն ունի, փոյթ չեն ըներ բնաւ չեղիլ
այդ սփիւնքական ընթացքէն, որ սերունդէ
սերունդ փոխանցուած է:

Այս դիտողութենէն չէք հետեւցուներ
անշուշտ թէ Փարոս անուղղակի գանգատ մը
ընել կուզէ թէ Առաջնորդարանի վարիչները
չեն ճանչնար զինքը: այդ «նուիրագործումը»
ստանալու պատիւը առաջին օրերէն ունեցած
ենք արդէն: Եւ ճիշդ այս այսպէս ըլլալուն
համար է որ չենք ըմբռնել կարգ մը պարա-
գաներու մէջ ցոյց արուած համարութիւնը:
Օրինակները չեն պակսիր: վաղը հանդիսա-
ւոր պատարագ և պաշտօն կայ, պէտք է որ
ժողովուրդը իմանայ ու երթայ: և ահա՛ բա-
րապանդ կուգայ՝ հրատարակելի պաշտօնա-
կան ծանուցումը ձեռքը: երէկ կտակի մը
բացում կատարուեցաւ, 24 ժամ չանցած
կէս-պաշտօնական զեկոյցը կը հանի, օրհնա-
բեր ոճով մը գրուած: սակագիւններ կը հաս-
տատուին ու կը բարեփոխուին, գանձումի վե-
րաբերող շրջաբերականներ կը հանուին, ասոնց
ամենուն համար լրագիրը հայ գաղութին օղ-
կան է, և ազգասիրական ծառայութիւն
մը մատուցած կըլլայ զանոնք հաղորդելով իր
ընթերցողներուն: Կուգայ սակայն վայրկեան
ուր լրագիրն ալ, իր կողմէ, այդ ազգասի-
րական ծառայութիւնը կըմբռնէ հրապարա-
կաւ հարցում մը ուղղելուն, քննադատութիւն
մը ընելուն, սահմանադրական արամադրու-
թիւնները յիշեցնելուն մէջ: և ահա՛ այն խօ-
սուն, ժպտուն, զիրարամտեղի աղաները
Սփիւնք կը կարին: հարցուն, եթէ չես յոգ-
նիր, թէ ինչո՞ւ կտրեցին գաղթականներուն
անունը՝ որոշուած թուականէն առաջ, թէ
ի՞նչ եղաւ այսինչ կտակին գործադրու-
թիւնը, թէ ինչո՞ւ սա աղքատի հարսնիքէն
այլքան ոսկի կը պահանջուի, թէ ինչո՞ւ գե-
րեզմանատան մուտքը — որ հարթ հաւատար
է — այնքան աստիճանաւոր կը դառնայ, պառ-
ջարկէ՛ որ տարեկան համարատուութեան ամ-
փոփումը հրատարակութեան տրուի, յիշեցուն
թէ առաջնորդի ընտրութեան թուականը ե-
կած անցած է: խո՛ր լուսթիւն: Այս անե-

րելի մեղքերը, առաջնորդարանի շրջանակնե-
րուն մէջ, սա ազգեցութիւնը կունենան որ
երեւակայօրէն կը դրկեն թերթի գաղթակա-
նութեան օղկանի հանգամանքէն, օրին մէ-
կը թերեւս զայնոնքէն «չնորհելու» համար, երբ
... հարկը ներկայանայ:

Այս բոլոր տարօրինակ ու անմեկնելի ե-
րեւոյթներուն մէջ տեղ՝ լրագիրը բան մը չի
տուժեր, բայց տեղական և ազգային դոժ-
ժերն են որ կը շարունակեն տարտամ, ան-
կանոն ընթանալ, զորս ուղիղ ճամբու մէջ
գնելու միջոցը յամառ լուսթիւնը ու անտար-
բեր ձեւանայը չեն:

Կ Ե Ա Ն Ք Մ Ը

ՇԵՌՈՒԹԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՄ

Ուղին անհարթ կերպարի կամարներու տակ մը թիւն:
Մարդիկ կանցնին անշուշտ ինք իրենց մէջ ամբողջ-
ուած:

Կիսատուերին մէջ հոս հոն աղօտ լոյսեր կը վառին:
... Ու կը քալէ ան միմեկի, կը բալլ ան յամբարնայ
կեանքի ճամբուն մէջ անհարթ, կամարներու տակ
մը թիւն:

Չըճանչցուած դիմակներ քովէն կանցնին անտարբեր,
Աչքերուն մէջ կը նային չը հասկցուած նայուածքներ,
Ու Չեւը կանցնի կերթայ, ու նայուածքը կը մարի:
Ու կը քալէ ան նորէն, մինչդեռ առանց դադարի
Չըճանչցուած դիմակներ քովէն կանցնին անտարբեր:

Երբեմն ըստուեր մը լոյսէ, ըստուերի պէս վաղանցիկ,
Աչքերուն մէջ կը վտոնէ Յոյսի ցոլքերը ժպտուն:
Բայց երազը կանհետի ու հոգիին մէջ մենիկ
Սպասումն ալ աւելի կը մուսլի, միշտ նըկուն,
Երբ տեսիլքը կաւորի ըստուերի պէս վաղանցիկ:

Օրը օրին ետեւէն կը թաւալին տարիներ:
Ու ալ չի գար Անիկա: Թերեւս անցող անձանք
Դիմակին տակ ուր աչքերս, ըստուածն արցունքոտ
Միայն զիտակը տեսան որ երազը — կը ծածկէր,
Օրը օրին ետեւէն կը թաւալին տարիներ:

Ճակատն ի՛նչ չուտ կտկուտի, փոսը ի՛նչ չուտ կը փոր-
ուի:

Միայն Յոյսը չը մեռնիր շարժիկելու համար զայն:
Յոգնութենէ խաւարած նայուածքներով կը յառի
Պատկերներուն որ անվերջ ըստուերին մէջ կը դառ-
նան:

Ճակատը չուտ կտկուտի ու փոսը չուտ կը փորուի:

Ուղին անհարթ կերպարի կամարներու տակ մը թիւն:
Մարդիկ կանցնին անշուշտ ինք իրենց մէջ ամբողջ-
ուած:

Կիսատուերին մէջ հոս հոն ճրագները կը մարին:
Կը քալէ ան միմեկի ու կը բալլ յամբարնայ
թորթորատին մէջ անեւ, կամարներու տակ մը թիւն:

անհետանայ :

ՄԱԿԵՆԴՈՆԻՈՅ ԳՈՐԾԵՐ

Ռուսական դեսպան Պ. Ջինովիեֆ Կ. Պոլիս հրաւիրեց Մանասթըր—Պիթոլիայի ռուս հիւպատոս Պ. Ալեքսանտրէֆը, տեղեկութիւն առնելու համար Մակեդոնիոյ տագնապի կացութեան վրայ և հասկնալու համար այդ նահանգին իսլամ (թուրք և առնաւիւտ) ու քրիստոնէայ (պուլկար, յոյն, սերպ և ռուսականացի) ժողովուրդներուն յարաճուն գրգռութեանց վիճակը:

Սելանիկէն ալ կը հեռագրեն, —ինչպէս յիշած ենք «Այժմէութեան» մէջ, — թէ Սուլթանը հրաման ղրկեց է Էտհէմ փաշային՝ Իւսկիւպ երթալ ու քանի մը շաբաթէ հետէ այնտեղ համախմբուած օսմ. զօրքերուն հրամանատարութիւնն ստանձնել, զսպելու և արգելելու համար ալպանիացիներուն յարձակումները՝ Բոսովայի սերպ և պուլկար բնակիչներուն վրայ: Էտհէմ փաշա արդէն իսկ հասած ըլլալու է Իւսկիւպ:

—Կ. Պոլսոյ անգլիական դեսպանատան քարտուղար Պ. Էլիզ. Սկիւպ կը գտնուի այս միջոցիս, քննութիւն մը կատարելու համար այնտեղ գործուած խռովութիւններուն վրայ:

ԿՐԷՏԷ

Հանեայէն Սքանտարտին ուղղուած հեռագիր մը կը հաղորդէ թէ ծովակալները պաշտօն յանձնեցին Ամբէթի հարիւրապետին՝ ծանուցանել ձէվատ փաշայի թէ որոշած են պատժուիլ պահանջել այն թուրք սպաններուն ու զինուորներուն որոնք Բէրիլիօլիայի մէջ ֆրանսացի զինուորներու վրայ յարձակած էին:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Եօրկիոս թագաւորին վրայ եղած սպաննութեան փորձին հետեւանօք՝ նոր հեռագրեր չի կան Աթէնքէն: Ոճրագործներէն երկուքն ալ, Քարտիձի և Ճիօրձի, ձերբակալուած են, ինչպէս հաղորդեցինք նախորդ թուով. անոնց հարցաքննութիւնը առաջ կը տարուի այս պահուս:

Խորհրդարանը (Վուլին) գումարուելով այս հինգշաբթի օր, թագաւորին ուղղեալ հաւատարմութեան ու վստահութեան ուղերձ մը քուէարկեց է միաձայնութեամբ:

Այս համակրական արտայայտութիւնէն ետք, ժողովը իր օրակարգին անցնելով, եւմտական նախարար Պ. Սըրէյը ներկայացուցեց է քննդրոյի ծրագիրը:

—Աթէնքէն Հավասի հեռագիր մը կըսէ թէ Անգլիա, Ֆրանսա և Ռուսիա յանձն առած են մինչեւ հինգ միլիոն անգլ. ոսկիի փոխառութիւն երաշխաւորել Յունաստանի:

ՋՕԼԱԻ ԴԱՏԸ

Ֆրանսական կառավարութիւնը մտադիր է, կըսուի, արգելել մուտքը քանի մը օտար լրագրերու որոնք Տրէֆլը կը պաշտպանեն բուն յօդուածներով, մասնաւորապէս Էնսէքսանսան Պեյժը: Թան կը պախարակէ այս տնօրինութիւնը:

—Լիպո Բառօյի խմբագիր Պ. Էտուար Տրիւմոն (հակաղալական) և Օռօռի խմբագիր Պ. Ժօրժ Քլէմանսօ (զօլայական) ատըր-

ճանակով մենամարտ մը ունեցան: Վեց հարուած փոխանակեցին, առանց ոչ մէկը վիրաւորուելու:

—Բարիդի պուլվառներուն վրայ նոր լրագիր մը շրջաբերութեան հանուած է՝ Ման Հրեաններուն անունով:

—Պառ լը Տիւքի գաւառին մէջ հակահրէական ցոյցեր տեղի ունեցան նախորդ շաբթուն: Ամբոխը խորտակեց Թօպման Բարբիին տան պատուհանները ինչպէս նաև հրէից խանութներուն ապակափեղկերը: Բարբիին ընտանիքով հեռացաւ:

—Չօլաին հակառակորդները իրենց կատաղութիւնը յագեցած չեն զգար անոր կրած դատապարտութեամբ, և կը պահանջեն որ վիպասանին անունը ջնջուի Պատուոյ Լէգէոնի տուճարներէն: Բարիդեան մամուլին մէջ այս խնդրին վրայ ալ վէճ բացուած է, բայց Չօլաին համակիր թերթերը կը պատասխանեն, և իրաւամբ, թէ Պատուոյ Լէգէոնի պատուանշանը ետ կառնուի այն պարագային մէջ միայն ուր մէկը իր քաղաքային իրաւունքներէն զրկուելու դատապարտութիւն մը կրէ: Ասով հանդերձ, Պատուոյ Լէգէոնի խորհուրդը բացարձակ տէր է ուղածը տնօրինելու, և անկարելի չէ որ, կառավարական ազդեցութիւններու հպատակելով —ինչպէս հպատակեցան երգուեալ դատաւորներն իսկ— այս տեսակ ծայրայեղութեան մը դիմէ:

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

ՈՐԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Պաթումի մէջ, քանի մը հոյ տղաքներ՝ իրենց ծնողաց ներշնչմամբ՝ դուռնէ դուռ շրջելով 900 լուրիի մօտ գումար մը հանգանակեցին: Հայաստանի որբերուն ու կարօտեալներուն ի նպաստ: Այդ գումար Կ. Պոլսոյ ռուսական դեսպանատան միջոցաւ Ալգ. Պատրիարքարան ղրկուեց է, իր նպատակին գործածուելու:

Եգիպտոսի հայերը որոնք դեռ մէկ սանդիմ չի նստիւցին այդ եղբայրսիրական նպատակին համար, —հակառակ որդական յանձնառուութիւն մը կապուած է անոնց արտաքին շահերու, — արդեօք լուսոգոյն չի՞ պիտի ընէին իրենք ալ տղաքներու յանձնելով այս հանգանակութեան գործը: Ինչ որ Պաթումի մէջ յաջողած է, Գահիրէի մէջ փորձելը դժուար չի պիտի ըլլայ:

ՆՈՐ ‘ՄԱՍԻՍ, Ը

Պոլսոյ հայերը չէին կրնայ շատանալ միակ հայերէն օրաթերթով մը, թէեւ եղաւ թուական մը —1896 սեպտեմբերի, դեկտեմբեր— ուր բնաւ ազգ. լրագիր չունեցան: Հիմա խումբ մը երիտասարդ գրողներ միացած, կենդանութեան շունչ մի տալ կը փորձեն ալեգորիկ Մասիսին, անոր քառասունըփեյտմէս արտեղարմի օրէն ստանձնելով անոր հրօտարակութիւնը նոր ուղղութեամբ, խնամուած պատուանակութեամբ և թարմ ուժերով. Հեռուէն՝ մեր համակրանքը ու յաջողութեան իշխանը կուղղենք իրենց:

ՕԹԷԼԼՕ

Կուղէք տեսնել Օթելլօն. վաղը դիշեր գացէք Ապու-Խալիլ թատրոնը, ուր Ալեքսանեան իր նշանաւոր ներկայացման համար ընտրած է այդ գեղեցիկ խաղը: Ծանօթ դերասանը՝ որ արդար համբաւ մը ունի հակառակորդի, նախանձոտի դերերու մէջ՝ ինք ստանձնած է Մալքիտանայի դերը: Օթելլօն, թիկնաթոռ, հիմնուեց գրաւուած են գրեթէ ամբողջովին, և յետամնացներուն դժուար ըլլայ գուցէ տեղ գտնելը: Կարժէ այս փութկոտութիւնը ոչ միայն Շէքսպիրի խաղին, այլեւ նպատատարեալին ի պատիւ, որ այս երեկոյթի յաջողութենէն կը սպասէ ամբողջ մը այն դառնութիւններուն զորս կրնայ այստեղ իրեն գողթական-դերասան:

ՏԵՂԱԿԱՆ

Եգիպտական երկաթուղիներու վարչութեան նախագահ Պ. Ռօպերթսըն և նոյն վարչութեան անդամ Պօլսո փաշա Նուպար վաղը Վերին Եգիպտոս կուղևորին, նորաչէն երկաթուղիի գիծը աչքէ անցունելու համար՝ պաշտօնական բացումէն առաջ:

Գահիրէի ու Լուքսօրի միջեւ ուղղակի երկաթուղիութիւնը պիտի սկսի ի մօտոյ:

—Առողջապահական խորհուրդը խնդրած է կառավարութենէն որ այս տարի արգիլուի Մէքքէի ուխտադնացութիւնը, Պոմպէի մէջ տիրող ժանտախտին պատճառաւ: Նախարարները նկատողութեան առնելով այս առաջարկը, որոշեցին Բարձր Խորհրդին վերադարձին սպասել հարկ եղածը տնօրինելու համար: Միեւնոյն ժամանակ, հեռագրաւ ծանուցին Ն. Բարձրութեան որ Էլ-Արիշ կը գտնուի:

—Իտալական Սահմանադրութեան 30րդ տարեդարձին առթիւ, երէկ թէ՛ Գահիրէի և թէ՛ Ալեքսանդրիոյ հիւպատոսարաններուն մէջ ընդունելութիւնք եղան և իտալական դաղթականութիւնը հանդէսներ կատարեց:

—Անգլիական գրաւիչ բանակին հրամանատար Սըր Ֆրանսիս Կրէնֆէլդ որ Սուտանի սահմանագլուխը գացած էր քննութիւն մը կատարելու, երէկ առաւօտ վերադարձաւ:

—Երէկ, Մուսքիի Այ-Նիքօլա յունական եկեղեցիին մէջ գահարանական աղօթքներ կարդացուեցան Եօրկիոս թագաւորին կեանքը փրկուելուն առթիւ: Բաց ի հելլենական հիւպատոսարանի պաշտօնէութենէն և յոյն երեւելիներէ, ներկայ էր նաեւ ռուսական դեր-հիւպատոս Պ. Իվանօֆ:

—Գահիրէի պատժական ատենանք այս հինգշաբթի օր իր վճիռը տուաւ Մատակասաքար օթէին մէջ խղճուած ալճէրիացիին ըստ պանիլներուն նկատմամբ: Այդ ոճրին իբրև հեղինակ ձերբակալուած երկու ալճէրիացիներէն մէկը դատապարտուեցաւ մշտնջենական չղթայակապ աշխատութեան և միւսը տասը տարուան:

—Ելմտական նախարարութիւնը չի պիտի պատասխանէ եղբ. Հանրային Պարտուց պատուիրակներուն դիտողագրին՝ Խորվիլիէի շոգեհաններուն վաճառման դէմ:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐ

Աթէնք, 4 մարտ. — Խորհրդարանը՝ տուածին ընթերցումը ու առանց վիճարանութեան ընդունեց երկուստեք բոնդրոյի ծրագիրը:

ԱՐՁԱԳԱՆԳ

ՌՈՒՍԱՅԱՅՈՑ ԿՏԱԿԵՐԸ

Աստրախանցի հայ մը, Ստեփան Խիթարեան, որ փետրվարի սկիզբը մեռեր է Թիֆլիզի մէկ օթէին մէջ, իր հարստութեան մեծ մասը կտակով թողուցեր է Ներսիսեան դպրոցին: Հանգուցեալը անշարժ կալուած չունի, այլ տնական իրեղէններ և պանքաներու յանձնը ուած դրամ ու արժէթուղթ: Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը պիտի վաճառէ

իրեղենները և գոյանալիք գումարը բաժնէ աղքատներուն : Բայ ի իր մէկ ազգականուհիին ու քրոջը կտակած գումարներէ, Խիթարեան կտակած է տարեկան 120 ռուբլի Մասկովի համալսարանին ամենէն չքուստ հայ ուսանողին համար : այս նպատակով մէկ կողմ դրուած է 5000 ռուբլի, որուն տոկոսը միայն պիտի առնուի : Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան յատկացուցած է 1000 ռուբլի : Իսկ մնացած գումարով, ներսիսեան գաղութի հոգաբարձութիւնը պիտի սկսէ մէկ կամ երկու որդեգիր, Խիթարեանի անունով : Ասոնք իրենց ուսումը պիտի շարունակեն Ռուսաստանի, և ոչ թէ արտասահմանի բարձրագոյն վարժարաններու մէջ :

Հանգուցեալը իր կտակի մէջ խնդրած է որ յուղարկուածութիւնը բոլորովին անշուք կերպով կատարուի :

ԳԼԽԱՐԿԻ ՄԸ ՓՈՐՁԱՆՔՆԵՐԸ

Ամերիկայի մաքսադաշտայն դրութեան հեղինակ Պ. Տինկլէյ ընդհանուր քննադատութեան առարկայ է այս միջոցիս երկրին խորհրդարանական շրջանակներուն մէջ, վրան դիւլ, իր գործածած գլխարկին վրայ գըրուած էր «Լոնտոն շինուած» : — Ըսել է, կը պոռնն երեսին, քու հաստատած գրութիւնդ դուն չես յարգեր ու գլխարկդ Լոնտոնէն բերել կուտաս : Պ. Տինկլէյ ինքզինքը արդարացունելու համար, հեռագրեց Լէվիթըն գլխարկավաճառին ուսկից գնած էր իր գըրլխարկը, և խնդրեց որ յայտնէ թէ իրա՛ւ Լոնտոն՝ պատրաստուած էր այն : Մարդը պատասխանեց թէ իր բոլոր գլխարկները Ամերիկայի մէջ կը պատրաստուին, բայց սո՛ւրութիւն ունի «Լոնտոն շինուած» յիշատակութիւնը դրոշմել վրան՝ առանց որու իր յաճախողները պիտի կորսնցունէր :

Պ. Տինկլէյի հակառակորդները այս բացատրութենէն գոհ չի մնացին, և հիմակուց կը յայտարարեն որ եթէ օրին մէկը ինքն ալ Միացեալ Նահանգաց նախագահութեան պաշտօնին ընտրելի ներկայանայ, Մաք—Քինլէյի պէս իր մաքսային դրութեան օգուտներուն յենլով, «գլխարկին պատմութիւնը» առաջ պիտի անցունեն, անյաջողութեան մատնելու համար իր ընտրելիութիւնը :

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Յարուբիւն Հայանեան պատիւ ունի ծանուցանել իր բազմաթիւ յաճախողներուն քէ իր կօշկակարի խանութը Պագար Մուրուրէն փոխադրած է Քաճե Էմիլիանի դիմացի կարգը՝ կազմ ընկերութեան կեդրոնին մօտ բաւարար մէջ, գեթայարկ, քիւ 6 :

Ձեւաւոր ու ընթեր կօշիկներու պատրաստութիւն արանց եւ կանանց համար, դիւրամասշտիկ ցներով :

Կ Օ Շ Կ Ա Կ Ա Ր

ՅՈՒՆԱՆԵՍ ԶԱԶԱՐԵԱՆ

ԳԱՀԻՐԷ. Էգպէթիէ փողոց Էլօրասոյի դիմ

Հաշակաւոր պատրաստութիւն արանց և կանանց կօշիկներու :

Ապրանքի ընտրութիւն, տոկոսութիւն և գոհացուցիչ պայմաններ :

Գնելու չափաւորութիւն : 4—4

Ս Ա Փ Ր Ի Զ

Օ Շ Ա Ն Ն Է Ս Պ Է Յ Լ Ե Ր Ե Ա Ն

Բերայի ճարտար սափրիչներէն Օհաննէս Պէլլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գաւհրէ հաստատուած է և մեծապէս գոհ թուլցած իր յաճախողները, այս անգամ իր նոր խանութին մէջ (Աթապա էլ Խատրա, Թրամուէյի կայաչափին դէմ) ամեն զիւրու թիւն ու հանգստաւէտութիւն կընծայէ մարբութիւն, արագութիւն և վայելչութիւն՝ թէ ամբիւն և թէ վարսայարգարութեան մասին :

ՅՈՐԹՈՎԱՅԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱԱ ՄՈՒՀԱՄՍԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուն գոհացուցիչ գիներով :

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍՐՈՒՄՆԵՐԻ 10 — 10

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՍԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղատոմսին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական բաւարար գործարաններէն թերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով : Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին :

Անգլիական և ֆրանսական սրբապիքներ : Քարմ հանգալից ջուրեր, անուշահոտ քիւրք եւ ց. Բնաղբ տկան և մանրաղիտական քննութիւն : Դեղատոմս կը յաճախեն հայ և օտարազգի ծառայողներ :

Բժշկական ձրի խորհրդածութիւնը աղքատաց համար 31—50

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԷՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆԻ ՆԱԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԿԷ արանց և կանանց շապիկներ, չրջագգեւոններ, ելն. մաքրութիւն, ճշգրտահաւթիւն, և խիստ չափաւոր գին : 2—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երզրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻՆԻՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱԶԵՐԱՆԳՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն	օմնիպ.	կէս ուղ.	օմնիպ.	էքսորէս	օմնիպ.	էքսորէս	օմնիպիւս	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1 2 3 կարգ	կարգ
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 30	8 15	9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	»	երեկոյ 3 10	7 34	9 41	երեկ. 12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Ալեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	երեկոյ 1 —	9 40	8 7	—	5 50

ԱԶԵՐԱՆԳՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		օմնիպ.	կէս ուղ.	օմնիպ.	էքսորէս	խառն	օմնիպ.	էքսորէս	օմնիպիւս	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	1 2 կգ.	1 2 3 կարգ	կարգ
Ալեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿՈՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՕՏ	ԵՐԵԿՈՅ	ԿՈՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՕՏ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53	» կայարան	»	երեկոյ 1 20	7 5
Զակադիկ	ժամ.	1 34	8 54	Զակադիկ	ժամ.	3 7	8 53
	մեկ.	1 44	9 4		մեկ.	3 17	9 3
Խամադիա	մեկ.	3 40	1 —	Պէնհա	ժամ.	4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —		մեկ.	4 17	9 4
Տօբ (բարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35